ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

խորհրդի նիստի

ք. Աշտարակ ***29-ը ապրիլի 2026թ.***

ժամը 15^{00}

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետ***
Մ. Հովհաննիսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Ա. Գրիգորյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Վ. Հարությունյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական***
Մ. Դափումյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական***
Ն. Ավանեսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական***
Ս. Սարգսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական***

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի համայնքների ղեկավարներ

Ուժային կառույցի ներկայացուցիչներ

Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. 2026 թվականի առաջին եռամսյակի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ:
2. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին:
3. Մարզի համայնքների 2026թ. 1-ին եռամսյակի սեփական եկամուտների կատարման վերաբերյալ:
4. Համայնքապետարանների և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների չօգտագործված արձակուրդների վերաբերյալ:
5. Համայնքային ծառայողների և տեղական ինքնակառավարման մարմինների հերթական վերապատրաստումների վերաբերյալ:
6. Համայնքներում իրավական և մասնագիտական հսկողության վերաբերյալ:
7. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2026 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն:
8. Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:
9. 2026 թ. գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
10. Այլ հարցեր:

Նախքան օրակարգային հարցերի քննարկումը՝ մարզպետ Սերգեյ Մովսիսյանը ներկայացրեց ՀՀ Ազգային անվտանգության ծառայության Արագածոտնի մարզային վարչության պետ, գնդապետ Գագիկ Սարգսյանին՝ մաղթելով նրան բարեբեր, արդյունավետ աշխատանքային գործունեություն:

Լսեցին՝

1. 2026 թվականի առաջին եռամսյակի սուբվենցիոն ծրագրերի մշտադիտարկման խմբի կատարած աշխատանքների արդյունքների վերաբերյալ */զեկուցող՝ մարզպետի տեղակալ Ա. Գրիգորյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Նշվեց, որ 2022-2025 թվականների 31 սուբվենցիոն ծրագրերից այս պահի դրությամբ ավարտվել է 12-ը, ընթացքի մեջ է 19 ծրագիր: Կատարվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրության նպատակով նախորդ 4 ամիսների ընթացքում ծրագրերը մշտադիտարկվել են ամսական առնվազն 2 անգամ: Ընդհանուր առմամբ իրականացվել է 152 մշտադիտարկում: Յուրաքանչյուր այցի վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն, նշվել թերությունները, կցվել կատարված աշխատանքների լուսանկարները: Բոլոր արձանագրված խնդիրների վերաբերյալ գրավոր կամ բանավոր կերպով համայնքների գործընկերներն իրազեկվել են՝ համապատասխան շտկումներ իրականացնելու և մարզպետի աշխատակազմ ներկայացնելու նպատակով: Ներկայացվեց նաև տեղեկատվություն 2026 թվականին մարզի 8 համայնքներում նախատեսվող 31 սուբվենցիոն ծրագրերի իրականացման վերաբերյալ:

Քննարկվեց Շամիրամ համայնքի ասֆալտապատման աշխատանքների ընթացքում առաջ եկած խնդիրների, թերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ***և մարզպետի կողմից տրվեցին հանձնարարականներ*** թերությունների շտկման և աշխատանքները ավարտին հասցնելու ուղղությամբ:

2. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին */զեկուցող՝ մարզպետի տեղակալ Ա. Գրիգորյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Ներկայացվեց, որ ՀՀ կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրի ցանկում ներառված ՀՀ Արագածոտնի մարզի 45 դպրոցներին կավելանա ևս 7 դպրոց, որոնք ուսումնասիրվել են համապատասխան գերատեսչությունների կողմից: Այդ դպրոցներից բացի ևս 10 դպրոցի հիմնանորոգման հարցը Արագածոտնի մարզպետի որոշմամբ ուղարկվել է ՀՀ Կառավարություն՝ դպրոցաշինության հաջորդ ծրագրերում ընդգրկելու նպատակով:

Արդյունքում՝ ցանկում ներառված 52 դպրոցներից այս պահի դրությամբ 8-ում աշխատանքները ավարտվել են, 32-ում շինարարությունն ընթացքի մեջ է, 12-ը նախագծահաշվարկային և մրցութային փուլում է:

Մարզպետի կողմից մեկ անգամ ևս կարևորվեց շինաշխատանքների ընթացքում ուսումնական դասապրոցեսների սահուն տեղափոխման աշխատանքների կազմակերպումը:

3. Մարզի համայնքների 2026թ. 1-ին եռամսյակի սեփական եկամուտների կատարման վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան / :*

/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը ներկայացրեց տեղեկատվություն 2026թ. 1-ին եռամսյակի սեփական եկամուտների կատարման վերաբերյալ տեղեկատվություն: Մարտի 31-ի դրությամբ հավաքագրումն ընդհանուր կազմել է 17,7%. Աշտարակ՝ 17.2%, Շամիրամ՝ 24,2%, Ապարան՝ 18,6%, Ալագյազ՝ 25,6%, Մեծաձոր՝ 5,4%, Արևուտ՝ 38,4%, Թալին՝ 18,8%, Ծաղկահովիտ՝ 13,3%: Նշվեց, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած՝ ցուցանիշները մի փոքր ցածր են:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանը հանձնարարեց ՏԿ և ՏԻՀ վարչությանը ֆինանսական վարչության հետ համատեղ համայնքների ղեկավարների աջակցությամբ շարունակել պլանավորած ցուցանիշների հավաքագրման գործընթացի վերահսկողությունը:

4. Համայնքապետարանների և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների չօգտագործված արձակուրդների վերաբերյալ */զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան /:*

Զեկուցվեց, որ յուրաքանչյուր տարի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականի համաձայն մարզպետի աշխատակազմի կողմից ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ համայնքապետարանների աշխատակազմերի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների նախորդ տարիների չօգտագործված ամենամյա արձակուրդները տրամադրելու ուղղությամբ:

Նշվեց, որ ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի և համայնքների ղեկավարների կատարած աշխատանքների արդյունքում աշխատանքներն ամբողջությամբ ավարտել են Աշտարակ, Արևուտ, Ալագյազ, Մեծաձոր և Շամիրամ համայնքները:

Առաջարկվեց համայնքի ղեկավարներին ձեռնարկել համապատասխան միջոցներ իրենց աշխատակազմի աշխատակիցներին և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին օրենքով սահմանված ժամկետում ամենամյա արձակուրդները տրամադրելու ուղղությամբ:

5. Համայնքային ծառայողների և տեղական ինքնակառավարման մարմինների հերթական վերապատրաստումների վերաբերյալ */զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան /:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց. որ <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի համաձայն համայնքային ծառայողները յուրաքանչյուր երեք տարին մեկ ենթակա են պարտադիր վերապատրաստման: Վերապատրաստումն իրականացնում է օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպությունը, իսկ վերապատրաստման ծրագրերը հաստատում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը: Այս տարի մեր մարզում նախատեսված է կազմակերպել և անցկացնել 82 համայնքային ծառայողների և 1 խումբ՝ 25 տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստման դասընթացներ: Համայնքների ղեկավարների կողմից վերապատրաստման ենթակա մասնակիցների հայտերը սահմանված կարգով արդեն ներկայացվել են և՛ ՀՀ պետական կառավարման ակադեմիա, և՛ ՀՀ ՏԿ և ենթակառուցվածքների նախարարություն:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին գործուն աջակցություն ցուցաբերել վերապատրաստման ենթակա մասնակիցների մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:

6. Համայնքներում իրավական և մասնագիտական հսկողության վերաբերյալ *//զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան /::*

/Զեկույցը կցվում է/:

Ներկայացվեց, որ ՀՀ ՏԿ և ենթակառուցվածքների նախարարի հրամանով նախատեսված է, որ 2026թ. ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզի երեք համայնքներում՝ Մեծաձոր, Արևուտ և Ապարան, իրականացվելու է իրավական և մասնագիտական հսկողություն: Պլան-գրաֆիկով հսկողությունն իրականացվելու էր 2026թ. առաջին եռամսյակի ընթացքում: Ապրիլ ամսվա ընթացքում Մեծաձոր և Արևուտ համայնքներում աշխատանքային խմբի կողմից աշխատանքներն արդեն իսկ ավարտվել են և արդյունքները ներկայացվել են ՀՀ ՏԿ և ենթակառուցվածքների նախարարությանը: Արդեն ստացվել է հանձնարարական՝ Մեծաձոր համայնքում հսկողության արդյունքում արձանագրված թերությունները և բացթողումները վերացնելու վերաբերյալ: Կձեռնարկվեն համապատասխան միջոցներ և գործուն աջակցություն համայնքում արձանագրված թերությունները սահմանված ժամկետում վերացնելու ուղղությամբ:

7. Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի ընթացքի և 2026 թվականի համար ներկայացված ծրագրերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն /զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան /:

Տեղեկացվեց, որ **2022 թվականին** հաստատված Արագածոտնի մարզի 8 համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 19 սուբվենցիոն ծրագրերից, այս պահին ավարտվել են 17 ծրագրեր: 19 սուբվենցիոն ծրագրերի համար պետական բյուջեից ֆինանսավորման չափը կազմել է՝ 1 853 703 800 դրամ:Ներկայացվեց տեղեկատվություն ընթացքի մեջ գտնվող ծրագրերի մասին:

2023թ. ՀՀ Արագածոտնի մարզում կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 23 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթներ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել թվով 21 ծրագիր՝ ընդհանուր՝ 7 430 350 338 դրամ արժեքով: Վերջնական հաստատվել է 20 ծրագիր ՝ 6 045 271 911 ՀՀ դրամ արժեքով: Ներկայացվեց 2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի ընթացքի մասին մանրամասն տեղեկատվություն:

2024 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների կողմից ներկայացվել է սուբվենցիոն ծրագրերի 23 ամբողջական փաթեթ: ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկանը ներկայացված փաթեթներից դրական եզրակացություն է ստացել **16** ծրագիր: Հաստատված ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 10 097 560 426 դրամ, որի մեջ համայնքի մասնակցության չափը 5 155 183 522 դրամ է, պետական բյուջեից համաֆինանսավորման չափը՝ 4 894 551 364 դրամ, այլ ներդրողների կողմից ֆինանսավորման չափը՝ 47 825 540 դրամ:

2025 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից ստացված համաֆինանսավորման չափը կազմել է 3 359 789 900 ՀՀ դրամ, որը իր մեջ ներառում է՝ 2023, 2024 և 2025 թվականի ծրագրեր: 2025 թվականին ՀՀ Արագածոտնի մարզի մարզպետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկանն է ներկայացվել 19 սուբվենցիոն ծրագրերի փաթեթ: Ներկայացված փաթեթներից դրական եզրակացություն է ստացել 10 ծրագիր և 2 ծրագիր դրական-պայմանով:

2026 թվականին մարզի 8 համայնքներում նախատեսվում է իրականացնել 31 սուբվենցիոն ծրագիր, որի ընդհանուր արժեքը կազմում է 23 578 724 533 ՀՀ դրամ: ՏԿԵ նախարարություն է ներկայացվել 13 ծրագիր, որի ընդհանուր արժեքը կազմում է 10 452 594 373 դրամ, որից 3 ծրագիր արդեն ստացել է դրական եզրակացություն: 31 ծրագրերից 8-ը նախատեսվում է իրականցնել Աշտարակ համայնքում, որից 5-ը արդեն իսկ ներկայացվել է ՏԿԵ նախարարություն: 8-ը նախատեսվում է իրականցնել Ապարան համայնքում, որից 4-ը արդեն իսկ ներկայացվել է ՏԿԵ նախարարություն: 6-ը բաժին է ընկնում Թալին համայնքին: 3-ը բաժին է ընկնում Ալագյազ համայնքին: 3-ը բաժին է ընկնում Ծաղկահովիտ համայնքին: 2026 թվականին նախատեսվող 31 ծրագրերից 1-ը բաժին է ընկնում Արևուտ համայնքին: Նշված ծրագրի արժեքը կազմում է 88 558 400 դրամ: 1-ը բաժին է ընկնում Մեծաձոր համայնքին և 1-ը բաժին է ընկնում Շամիրամ համայնքին:

Քննարկվեց մանկապարտեզների վերանորոգման ընթացիկ հարցեր:

8. Մարզպետի աշխատակազմի պատվիրատվությամբ մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն /զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան /:

ՀՀ պետական բյուջեի միջոցներով «Համայնքների միավորմանը չմասնակցած, ինչպես նաև փոքր համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի» շրջանակում իրականացվել է ՀՀ Արագածոտնի մարզի Շամիրամ համայնքի գազիֆիկացման աշխատանքները: Ծրագրի արդյունքում համայնքի գազաֆիկացման հարցը ամբողջությամբ լուծվել է: Գազատարի ընդհանուր երկարությունը կազմում է 17, 2 կմ: Այս պահի դրությամբ իրականացվում են ավարտական ակտի կազմման աշխատանքներ:

Այդ ծրագրի շրջանակներում իրականցվել է նաև Կաքավաձորից դեպի Օթևան տանող ավտոճանապարհի 1.3 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքերը: Այս պահի դրությամբ աշխատանքները ավարտված են: Ընթանում են ավարտական ակտի կազմման աշխատանքներ:

Ներկայացվեց նաև տեղեկատվություն 2025, 2026 թվականներին ՀՀ Արագածոտնի մարզային ավտոճանապարհների ընթացիկ պահպանության վերաբերյալ. 2025 թվականին իրականացվել է 280.9 կմ մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության սխեմաների ձեռքբերում(նախագիծ) 7.988.800 դրամ արժեքով, իրականացվել է մարզային նշանակության 41 կմ ավտոճանապարհների կահավորում և 72.6 կմ գծանշում՝ ընդամենը 42.503.708 դրամ արժեքով: 2026թ. -ին իրականացվելու է մոտ 70կմ ճանապարհների գծանշման և ճանապարհային կահավորանքով համալրման աշխատանքներ 59 240 920 ՀՀ դրամ արժեքով:

ՀՀ Արագածոտնի մարզի թվով 5 մանկապարտեզների շենքերի վերանորոգման աշխատանքների համար մարզպետի աշխատակազմի կողմից հայտարարվել էր մրցույթ: Մրցույթի արդյունքում հաղթող կազմակերպությունների հետ կքնվել են պայմանագրեր: Տեղեկացվեց,որ այս պահի դրությամբ թվով **4** մանկապարտեզներում իրականացվում են աշխատանքներ:

Պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա անհետաձգելի (հրատապ) համարվող ծրագրերի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մարզպետի աշխատակազմի վարչական շենքի գազամատակարարման գծի կառուցման, ջեռուցման համակարգի անցկացման, դռների և պատուհանների փոխարինման աշխատանքներ: Նախագծանախահաշվային

փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքվել է պայմանագիր: Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ընթացքի մեջ են:

Տեղեկատվություն ներկայացվեց նաև մարզային նշանակություն ունեցող ավտոճանապարհների վերանորոգման ընթացքի մասին:

Զեկուցվեց նաև, որ «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչված հողակտորների օտարման գործընթացը սկսելու նպատակով մարզպետի աշխատակազմի կողմից հողամասերի գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքվել է պայմանագիր:

Պետական բյուջեից ֆինանսավորման ենթակա անհետաձգելի (հրատապ) համարվող ծրագրերի շրջանակներում 2025 թվականին սկսվել են Ալագյազ համայնքի համայնքային կենտրոնի արտաքին բարեկարգման աշխատանքները:

Մարզպետ Ս. Մովսիսյանը հանձնարարեց՝ հետևողական աշխատանքներ տանել Շամիրամ համայնքի գազաֆիկացման աշխատանքները ավարտին հասցնելու ուղղությամբ: Ոլորտային պատասխանատուներին հանձնարարվեց խնդրի լուծման համար հանդիպումներ ունենալ տեսչական մարմինների ներկայացուցիչների հետ հարցի կարգավորման ընթացքը արագացնելու նպատակով: Անդրադարձ եղավ ճանապարհների սպասարկման ոլորտում տարվող աշխատանքների կազմակերպման, պայմանագրերի կնքման և պարտավորությունները չկատարելու դեպքում դրանց լուծման վերաբերյալ:

9. 2026 թ. գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի վերաբերյալ */զեկուցող՝ Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա. Ղազարյան /:*
/Զեկույցը կցվում է/:

2025թ. ՀՀ Արգածոտնի մարզում տարերային աղետների պատճառված վնասների վերաբերյալ ներկայացվեց տեղեկատվություն, նշվեց, որ 2025թ.ին մայիս, հունիս ամիսներին կարկտահարվել են Թալին և Աշտարակ համայնքների հողատարածքները: Մարզպետի աշխատակազմում ստեղծված հանձնաժողովը ուսումնասիրել է պատճառված վնասները կազմել համապատասխան վնասի գնահատման ակտեր և ներկայացրել հանրապետական հանձնաժողով:
ՀՀ կառավարության որոշմամբ փոխհատուցել է 200 370 618 ՀՀ դրամ,Աշտարակ համանքում 1440 շահառուի տրամադրվել է 109 149 395 ՀՀ դրամ, Թալին համայնքում 276 շահառուի տրամադրվել 91 221 224 ՀՀ դրամ:

Ներկայացվեց տեղեկատվություն ՀՀ Կառավարության կողմից իրականացվող բուսաբուծության աջակցության 2025թ. ծրագրի շահառուների վերաբերյալ ըստ համայնքների: Նշվեց, որ ծրագրի ավարտից հետո շահառուներին կփոխատուցվի մոտ 350,000,000 ՀՀ դրամ:

Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի շրջանակներում զեկուցվեց արհեստական սերմնավորման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն: Համայնքներում իրականացվել են նաև մկնանման կրծողների և ծղրիդների դեմ պայքարի միջոցառումներ ընդհանուր 2050 հա վարակված հողատարածքներում:

Մարզպետի կողմից հանձնարարվեց հետևողական լինել, որպեսզի գյուղացիները իրազեկված լինեն ՀՀ կառավարության կողմից տրամադրվող բոլոր աջակցման ծրագրերին: Շարունակական

հանդիպումներ ունենալ ազգաբնակչության հետ և տեղում ճշտել կարիքներն ու հնարավոր մասնակցությունը:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին համատեղ և արդյունավետ աշխատանքի համար:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ **Սերգեյ Մովսիսյան**